ԱՐՈՒՃԻ ՏԱՃԱՐԻ 666 Թ. ՈՐՄՆԱՆԿԱՐԸ

ԿԱՐԵՆ ՄԱՔԻԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի պետական պատկերասրահում, արևմտաեվրոպական, ռուսական և հայկական գեղանկարչական հարուստ հավաքածուներից բացի, պահվում են հայկական միջնադարյան տաճարների որմնանկարներից և ձեռագրերի մանրանկարներից կատարված բազմաթիվ արժեքավոր ընդօրինակություններ։ Դրանցից է Արուճի տաճարի որմնանկարը։ «Արուճի եկեղեցին ոչ միայն իր մեծությամբ և բարձրությամբ է նշանավոր, այլ շինարարական տեսակետով ևս աչքանշելի է»,—գրում է Թորոս Թորամանյանը և այն համարում «մի գոհար VII դարու մեջ»[1]։

Տաճարի որմնանկարի մանրազնին ուսումնասիրությամբ զբաղվել է հայ միջնադարյան գեղանկարչության ճանաչված մասնագետ, արվեստաբան Լ. Ա. Դուրնովոն, որի կարծիքով այն նոր և կարևոր էջ է հայկական գեղարվեստական մշակույթի զարգացման պատմության մեջ[2]։

Պատկերասրահում են գտնվում տաճարի ավագ խորանի մեծածավալ պարդագոտու (100×960 սմ) 1950 թ. ընդօրինակությունը (կատարողներ՝ Գ. Խանազյան, Է. Կորխմազյան) և որմնանկարի 1973 թ. ամբողջական ընդօրինակությունը (կատարողներ՝ Վ. Բաղդասարյան, Է. Կորխմազյան, Ս. Հովհաննիսյան)։

Արուճի տաճարի որմնանկարը ավագ խորանի գմբեթարդում պատվանդանի վրա կանգնած Քրիստոսի մեծադիր պատկերն է (մոտ 7 մ բարձրությամբ), որի ձախ, պարզած ձեռքին կա ալիքաձև ոլորաններով ցած իջնող մագաղաթագալար՝ Հովհաննու ավետարանից վերցրած քաղվածքով (գլ. XIV, տուն 21)։ Այժմ այդ պատկերի միայն ներքևի մասն է պահպանվել՝ ծնկներից մի փոքր վերև, ուստի, հայտնի չէ, թե ինչ դիրքում է եղել աջ ձեռքը։ Խորանը երիզող լայն զարդագոտին երկու հատվածի է բաժանում մարգարիտներով և գունագեղ քարերով զարդարված պատվանդանը։

Նկատի ունենալով կենտրոնական պատկերի աջ և ձախ կողմերի (այժմ ծեփազուրկ) ընդարձակ տարածությունը, Լ. Ա. Դուրնովոն ենթադրում է, որ այդտեղ պատկերված են եղել կամ հրեշտակներ, կամ էլ տաճարի հովանավոր և պատվիրատու Գրիգոր Մամիկոնյանն ու իր կին Հեղինեն[3]։ Դրա օգտին է խոսում Քրիստոսի պատկերից դեպի աջ, վատ պահպանված, սակայն որոշակիորեն երևացող գեղեցիկ, կապույտ թանկարժեք քարի պատկերը, որն ամենայն հավանականությամբ, ինչ որ հագուստի հատված է զարդարել։ Նկա-

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական հարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 120, 121։

2 Л. Дурново, Стенная живопись в Аруче (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), Երևան, 1952, № 1, էջ 66)։

3 Նույն տեղում, էջ 64։

բաղրված տեսարանից ներքև, գլխավոր խորանի հյուսիսային կողմի պատին, տեղադրված են ամբողջ հասակով կանգնած վեց մարդկային պատկերներ։ Ելնելով նրանց դիրքից, հագուստից, լուսապսակներից, նրանք, անկասկած, ներկայացնում են առաքյալներին, իսկ հարավային կողմի պատին պետք է եղած լինեին մնացած վեց առաքյալների պատկերները։ Բացառիկ հետաքրքրական են առաքյալների ձեռքերում պահվող գրքերը, որոնց ճաշակով զարդարված կազմերը մեզ հասած հայկական հնագույն կազմերի պատկերներն են։ Վարպետորեն են նկարված առաքյալների դեմքերը, որոնց նկարիչը օժտել է խոր արտահայտչականությամբ։

Լ. Ա. Դուրնովոն պատկերագրական կանոնների բնույթից ելնելով գտնում է, որ զարդաղոտուց ներքև, առաքյալների տրանքում ընկած տարածության վրա, պետք է պատկերված լիներ տիրամայրը և հրեշտակներ։ Այդ կառուցվածքը «հանդիսանում է «օրենք տվող աստծու» հորինվածքի պատկերագրական, գաղափարական և ավետարանում շարադրված «համբարձման» մեկնաբանության համատեղումը»[4]։

Նկ. 1. Արուճի տաճարի ավագ խորանի ընդհանուր տեսքը։

Արուճի որմնանկարում ամենից լավ պահպանվել է գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող զարդագոտին, որը մինչև այժմ չի կորցրել իր հմայքը։ Դա ականթի փարթամ թփերից պարբերաբար վերև և ներքև թեքվող,

[4] Л. Дурново. Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, с. 142.

ոլորապտույտ հյուսված, կատարման թեթև ու ապաս եղանակով ստեղծված մի պարդաշար է, ուր պարուրաձև պատված ճյուղերի արանքներում երևում են խաղողի, նռան, գավաթի, մրգերով լցված զամբյուղի պատկերներ։ Նկարիչը բույսերի վառ երանգներով պատկերները տեղադրել է մուգ խորքի վրա, որը և առավել թովչանք է տալիս ստեղծագործությանը։ Հենց ոլորանների գաղափարը, ականթի դուրս գալը խոշոր թփերից, տերևների խտությունը պարդաստու ոճը մոտեցնում են Գառնիի տաճարի քանդակապարդ քիվերի ոճին[5]։

Արուճի հսկայածավալ տաճարը (16,95 մ×34,6 մ) ծեփված է եղել ամբողջությամբ. այդ են հաստատում մյուս պատերի վրա պահպանված ծեփի մնացորդները, իսկ որմնանկարի մոտից (առաքյալների ոտքերից մի փոքր ներքև, մինչև հատակը) անցել է ողջ տաճարը երիզող գունային գոտի, որի հետքերը պահպանվել են սևացած։

Այժմ փորձենք պարզել, թե երբ է նկարազարդվել տաճարը։

VII դ. 60—80-ական թվականներին անդրադարձող բոլոր հայ պատմիչները գովեստով են հիշատակում եղբոր՝ Համազասպի մահից հետո արաբական պատանդությունից վերադարձած և Հայաստանի կառավարիչ (661—685 թթ.)[6] նշանակված «եղբայրասէր, օտարասէր, դարմանիչ տղքատաց և բարեպաշտ» իշխան Գրիգոր Մամիկոնյանին, որը և Արուճի տաճարի հիմնադիրն է։ Հայոց պատմության շինարարական վերելքի այդ դարում նորեկ իշխանը, բնականաբար, անմիջապես իր աթոռանիստ Արուճում ձեռնարկում է եկեղեցու, ապա և շքեղ պալատի կառուցումը։ «Եւ շինեաց նա (Գրիգոր Մամիկոնյանը—Կ. Մ.) տուն աղօթից ի գաւառն Արագածոյ ոտին ի յաւանն Արուճ՝ տաճար փառաց անուան տեառն՝ գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ ի յիշատակ անուան իւրոյ»[7]։

Առ այսօր Արուճի տաճարին այս կամ այն կերպ անդրադարձող ուսումնասիրողները նրա կառուցման ժամանակի համար բերում են ամենաբազմազան թվեր, չհանդելով ընդհանուր եզրակացության։ Շինության պատճառը տաճարի արևելյան պատի՝ բավական լավ պահպանված[8], շինարարական արձանագրությունն է՝

Ի ԵՒ (Թ) ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏՆԻ ՄԱՐԵ
ՐԻ ԱՄՍՈՅ ՈՐ ԱՒ(Ր) Ճ ԵՒ Ե ՀԻՄՆ
ԱՐԿԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ
Ի ՁԵՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ
ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆԻ ԵՒ ՀԵՂԻՆԷ
Ի ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿԸՑԻ
Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՇԻՆԱՒ
ՂԱՅ ՁՍԱ։

---

5 Л. Дурново, Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, с. 12.

6 А. Тер—Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1977, с. 51.

7 Ղևոնդ Երեց. Արշավանք արարաց ի Հայս. Փարիզ, 1957, էջ 35։

8 XVI—XVII դարերում, ուրիշ եկեղեցիների նման, Արուճի տաճարը նույնպես օգտագործվել է որպես ամրություն, որի համար արևելյան կողմում բրգաձև մի հավելված է ավելացվել։ Դրա հետևանքով արձանագրությունը մի քանի հարյուրամյակ մնացել է ծածկված և քիչ է քայքայվել։

Բանն այն է, որ արձանագրության մեջ նշված է բյուզանդական Կոստանդ կայսեր կառավարման 29-րդ տարին (Ի ԵԻ Թ), մինչդեռ հայտնի է, որ վերջինս 27 տարի է միայն կառավարել։ Անճշտությունն ակնառու է։ Այս կապակցությամբ տարբեր ժամանակներում մի շարք հեղինակավոր գիտնականների կատարած զանազան ենթադրությունները ոչ մի կերպ չեն պարզում հարցը։ Տաճարի կառուցման թվականը որոշելու համար հիմնականում ուշադրություն է դարձվել բյուզանդական կայսրեր Կոստանդի (641—668 թթ.) և նրա հաջորդ Կոստանդին IV-ի (668—685 թթ.) անունների հնարավոր շփոթության վրա։ Կասկածից դուրս համարելով արձանագրության «Ի ԵԻ Թ» թվականը, Ն. Մարը ենթադրում է, որ Հայաստանում կարող էին չիմանալ, որ Բյուզանդիայում արդեն 3 տարի նոր կայսր է գահակալում և արձանագրությունում նշված թվականը համարում է 670 թ.[9]։

Հ. Օրբելին անձամբ տեսած չլինելով արձանագրությունը և չկասկածելով, որ տաճարը VII դարում կառուցված է Գրիգոր Մամիկոնյանի կողմից, արձանագրության տեքստի քննությունից ելնելով, ենթադրում է, որ այն XI դ. արտագրություն[10] է։ Հենվելով Օրբելու սույն ենթադրության վրա, Զուբինաշվիլին Արուճի տաճարը համարում է X դ. կեսերի կառույց[11]։

Վ. Հարությունյանի կարծիքով Արուճի տաճարի շինարարությունը սկսվել է 667—668 թթ.[12], իսկ «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» հեղինակները տաճարի կառուցման ժամանակաշրջանը համարում են VII դ. 70—80-ական թվականները[13]։ Տաճարի կառուցման ժամանակի մասին կարծիքների տարբերությունը, ինչպես տեսնում ենք, տարիներից հասնում է տասնամյակների, նույնիսկ դարերի, կասկածի տակ է առնվում արձանագրության բնագիր լինելը[14], փորագրողի սխալը մեկնաբանվում է տարբեր կերպ[15] և այլն։

Նախ, նկատենք, որ Արուճի տաճարի կառուցումն ավարտելու թվականը կարող է որոշվել միմիայն մատենագրական աղբյուրների հիման վրա, թեկուզ այն պատճառով, որ արձանագրության մեջ նշված թվականը վերաբերում է ոչ թե շինարարական աշխատանքների ավարտին, այլ, մեր կարծիքով, տաճարի հիմնադրման արարողությանը՝ «Հիմնարկութիւն եկեղեցւոյ», որը կատարվում է եկեղեցիների հիմնադրման հատուկ կանոններով[16]։ Արուճից ընդամենը 22 տարի առաջ կառուցված Բաղավանի եկեղեցու արձանագրության սկզբում ասվում է, որ այն հիմնադրվել է Հերակլ կայսեր 21-րդ տարում՝ 631 թ. «Հիմնարկի սրբո եկեղեցւոյս...», իսկ արձանագրության վերջում նշվում է, որ շինարարությունը ավարտվել է նույն կայսեր 29-րդ տարում՝ 639 թ. «Եղեւ կատարումն նոյն գործոյս...»։

---

9 Н. Я. Марр, Армянская церковь в Аруче («Известия Археологической комиссии», 1904, вып. 12, с. 61—67).

10 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. 423.

11 Г. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, с. 116.

12 В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аруче, Ереван, 1946, с. 30.

13 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 171։

14 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 404։

15 Ա. Ա. Մանուչարյան, Քննություն Հայաստանի V—X դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 100—103։

16 Մատենադարան, ձեռ. № 6326, էջ 8ա։

624—631 թթ. կառուցված Բագարանի եկեղեցու արձանագրությունում նույնպես կարդում ենք երկու հիշատակություն. մեկը հիմնադրման՝ «...ձգեաց զհիմունս սրբո եկեղեց[ոյս]» և մյուսը՝ ավարտի մասին. «...կատարեաց սուրբ եկեղեցիս...»[17]։

Արուճի արձանագրություններ կանգրադառնանք քիչ հետո, իսկ այժմ դիմենք մատենագրական աղբյուրներին, որոնք միաձայն հաղորդում են տաճարի ավարտման թվականը։

Նկ. 2. Հատված որմնանկարի զարդագոտուց։

Սամվել Անեցու ժամանակագրության ամենահին օրինակում, գրված 1176 թ. Անաստասի կաթողիկոսության հինգերորդ տարվա դիմաց, կարդում ենք. «Շինուած կաթողիկէին յԱրուճ, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դաւիթ՝ որ յաշխարհէն Պարսից եկն՝ Սուրհան անուն և վասն վկայութեան Քրիստոսի կախեցաւ զփայտէ ի Դուին»[18]։ Մատենագրական բոլոր աղբյուրները Անաստաս կաթողիկոսի գահակալությանը տալիս են վեց տարի, 661—667 թթ., ուստի նրա հինգերորդ տարին 666 թ. է։ Նույն միտքն է հաստատում նաև Կիրակոս Գանձակեցին. «Ի հինգերորդ ամի Անաստասայ եղև շինուած կաթողիկէին՝ որ յաւանն Արուճ, զոր շինեաց Գրիգոր Պատրիկն, յորում մկրտը նահատակն Քրիստոսի Դավիթ...»[19]։ Ուրեմն, տաճարի կառուցումն ավարտվել է 666 թ.։ Այս առումով հետաքրքրական է նաև Դավիթ Դվինեցու Վարքը։ Ազգությամբ պարսիկ զորական Սուրհանը դիմում է Գրիգոր Մամիկոնյանին քրիստոնեություն ընդունելու խնդրանքով։ Իշխանը ոչ միայն ընդառաջում է նրան, այլև դառնում Սուրհանի կնքահայրը, նրա վրա դնելով իր հոր անունը՝ Դավիթ[20], իսկ մկրտությունը տեղի է ունենում Անաստաս կաթողիկոսի ձեռքով, Արուճի տաճարի օծման սրբ։

Այժմ վերադառնանք արձանագրության խնդրին, որը, ինչպես տեսանք, տաճարը թվագրելու համար վճռորոշ նշանակություն չունի, և ցույց է տալիս,

17 Ա. Ա. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 70, 59։

18 Մատենադարան, ձեռ. N 5619, էջ 79ա։

19 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1964, էջ 62։

20 «Վիպասանք վարք և վկայաբանություն սրբոց», Վենետիկ, 1810, էջ 561։

թե երբ են սկսվել շինարարական աշխատանքները։ Մինչև 1971 թ. ուսումնասիրողներից ոչ մեկը չի նկատել, որ արձանագրության «Թ» թվականը վերցրված է փակագծերի մեջ, որը և թյուրիմացության մեջ է դցել գիտնականներին։ Արձանագրության «Թ» գիրը փակագծերում կարդալուց հետո Ա. Շահինյանը իրավացիորեն ենթադրում է, որ «Թ»-ի սխալ լինելը նկատվել է հենց գրության ժամանակ, բայց քանի որ նա «հիմնարկեցաւ» սխալմամբ մեկնաբանում է որպես ավարտ («շինեցաւ» կամ «կատարեցաւ»), գտնում է որ «Թ»-ի փոխարեն պետք է «Դ» եղած լիներ։ Այդ դեպքում Կոստանդինի Ի և Դ (24) տարին կհամընկնի 665 թվականին։ Ապա բերելով Կիրակոս Գանձակեցու վկայաբանությունը տաճարը Անաստասի հինգերորդ տարում շինելու մասին, Ա. Շահինյանը կառուցման ավարտը հանգեցնում է 665/666 թվականին[21]։ Համաձայնվելով 666 թ. հետ, պետք է նկատենք, որ «Թ»-ի և «Դ»-ի շփոթման ենթադրությունն անընդունելի է, որովհետև ա) այդ երկու տառերը գծագրական պատկերներով բոլորովին նման չեն իրար, ուրեմն տեսողական շփոթությունը բացառվում է, բ) անուններով մեկը «Թոռ» է, մյուսը «դաս», ուստի բացառվում է նաև լսողական շփոթությունը։ Պետք է նկատի ունենալ նաև, որ՝ գ) հայոց գրերը որպես թվականներ օգտագործվելիս ներկայացվել են թվային արժեքներով, իսկ «քսան և ինը» «քսան և չորսի» հետ չի շփոթվի։ Իրողությունն այն է, որ, իրոք, գործ ունենք փորագրող վարպետի սխալի հետ, որը, հավանաբար, շփոթելով «քսան և ինը» ու «քսան և մինը» «Թ»-ն վերցրել է փակագծերի մեջ։ Իսկ սխալը ջնջելով չի ուղղվել, որովհետև արձանագրությունը սեղմ է փորագրված և «Ա»-ն ավելացնելու տեղ չի եղել։ Եվ եթե անգամ «Թ»-ն բոլորովին անտեսենք, ապա միայն ամիսների տարբերություն պետք է առաջանա հիմնադրման թվականի մեջ։

«Ի և Ա»-ն 662 թ. է, միայն «Ի»-ն՝ 661, ուրեմն տաճարի հիմնադրումը տեղի է ունեցել 661 կամ 662 թ. «մարելի ամսի Ժ և Ե-ին», որը մարտի 25-ն է։

Հավանաբար Արուճի պալատի վրա եղել է նաև մի ուրիշ արձանագրություն, ուր և նշված է եղել տաճարի շինարարության ավարտման տարին։ Թերևս այդ է պատճառը, որ ո՛չ Անեցին, ո՛չ Գանձակեցին տաճարը թվագրելիս չեն հիշում որևէ բյուզանդական կայսրի, այլ նշում են հայոց կաթողիկոսի Անաստասի հինգերորդ տարին, ակնհայտորեն ժամանակի այդօրինակ հաղորդումը համարելով ավելի արժանահավատ և անփոփոխ։

Արուճի տաճարը կառուցվել է բավական արագ 661/662—666 թթ.։ Այդ մասին շատ արժեքավոր հիշատակություն է պահպանվել Հովհաննես Դրասխանակերտցու մոտ. «...Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնարրեալ սքանչագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի»[22]։

Այսպիսով, մատենագրական, ինչպես նաև արձանագրության ճշտված բնագրի հիման վրա, VII դ. համար փաստերի նման հարստության պայմաններում, կարող ենք համոզված ասել, որ Արուճի տաճարի կառուցումը ավարտվել է 666 թ.։ Նկատենք, որ պատմական հուշարձանի թվականը ոչ միշտ է համ-

---

21 Ա. Շահինյան, Արուճի տաճարի շինարարական արձանագրությունը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 1, էջ 78—84)։

22 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 90, 91։

ընկնում նրա որմնանկարի թվականի հետ, որովհետև վերջինս կարող է ավելի ուշ շրջանում նկարված լինել։ Լ. Ա. Դուրնովոն, նկատելով Արուճի որմնանկարի պատկերագրական կառուցվածքի, կատարողական ոճի և արտահայտչաձևերի մանրակրկիտ հետազոտությունից, գտնում է, որ այն միայն VII դ. կարող էր ստեղծված լինել և ոչ ուշ[23]։ Ղեկավարելով տաճարի կառուցման ճշգրիտ ժամանակը և բերելով ուրիշ հետազոտողի կարծիքը (որ տաճարի կառուցումը սկսվել է 667—668 թվականներին)[24], Լ. Դուրնովոն, այնուամենայնիվ, Ղևոնդ երեցի վկայությունից եզրակացնում է, որ Արուճի որմնանկարը ժամանակակից է հուշարձանին[25]։ Եվ, իրոք, Արուճի կաթողիկեում չկա ոչ բանդակագործական աշքի զարնող ստեղծագործություն, ոչ խճանկար, ոչ էլ որևէ ուրիշ բան, որի մասին պատմիչը գրեր. «գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ, ի յիշատակ անուան իւրոյ»-ը, որը անկասկած վերաբերում է որմնանկարին։ Տաճարի ներսի պատին, հարավային խորանի դիմաց, որմնասյան վրա պահպանվել է 867 թ. գրված մի արձանագրություն, որը փորագրելու համար պատից քերել են ծեփը (այն շատ պարզ երևում է մինչև օրս)։ Սա ևս մի ապացույց է, որ պատերը ծեփված են եղել 867 թ. առաջ։ Արուճում VII դ. կեսերին նման բարձրարվեստ որմնանկարի հանգես գալը բնավ պատահական չի համարում Ս. Մնացականյանը։ Նա գտնում է, որ այն սերտորեն շաղկապված է հայկական ճարտարապետության բուռն վերելքի հետ և ունի իր նախորդները, ինչպիսիք են Գառնիի հայտնի խճանկարը, որմնանկարների մնացորդների առկայությունը Աղցում, Քասախում, Երերույքում, Տեկորում, խճանկարի գոյության փաստերը Էջմիածնում, Դվինում, Երուսաղեմի հայկական եկեղեցում, Զվարթնոցում[26]։

Տեղին է բերել նաև մինչ այժմ ուսումնասիրողների կողմից Արուճի տաճարի թվագրման և որմնանկարի հարցի առնչությամբ չքննված Մովսես Կաղանկատվացու մի շատ հետաքրքրական տեղեկությունը։ Աղվանքի իշխան Ջվանշիրը լինում է Արուճում, որտեղ նրան մեծ շուքով ընդունում է Գրիգոր Սամիկոնյանը և օրհնվում է հայոց Անաստաս կաթողիկոսի կողմից։ Վերադառնալով Պարտավ, նա, պատմիչի վկայությամբ, «անմիջապես» գնում է տեղի իր կառուցած տաճարը և «...մեծ ծախսեր անելով նկարիչներ գործի դրեց և զմբեթից մինչև դռան բարավորները նկարեց ու պաստառեց կերպասներով...»[27]։ Դժվար չէ նկատել, որ Ջվանշիրն անպայման հարևան երկրի իշխանի տաճարում պետք է տեսած լիներ փառահեղ որմնանկարը։ Հետաքրքիր է նաև, որ Աղվանքի իշխանը Հայաստանում է եղել 664 թ. հետո[28] մինչև 667 թ. այսինքն՝ Անաստասի մահվան տարին, այլապես նա չէր կարող կաթողիկոսի օրհնությունը ստանալ։

Բերված փաստերը հաստատում են, որ Արուճի որմնանկարը ժամանակակից է հուշարձանին, այսինքն՝ 666 թ. տաճարի օծման ժամանակ այն արդեն նկարված է եղել։

---

23 Л. Дурново, Стенная живопись в Аруче, с. 61.

24 В. М. Арутюнян, նշվ. աշխ., էջ 30

25 Л. Дурново, նշվ. աշխ., էջ 55։

26 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 171.

27 Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 153։

28 А. Н. Тер—Геворкян, նշվ. աշխ., էջ 49—50։

Արուճի որմնանկարն ունի պատմամշակութային խոշոր արժեք։ Այն մեզ հասած առաջին գեղարվեստական նկարն է, որը պահպանել է նաև նկարիչ-արվեստագետի անունը՝ ինքնագրով (պատվանդանի ճակատին գրված է «Ստեփանոս»՝ նկարի մեջ օգտագործված կանաչ ներկով)։ Վերից վար իջնող մագաղաթյա փաթեթի վրա երկաթագրով գրված քաղվածքը փաստորեն առաջին հայերեն թվական ունեցող գրությունն է՝ 666 թ. (հայերեն թվակիր հնագույն ձեռագրերը IX դարից են)։ Ավագ խորանի դարգագոտու վրա պահպանվել են երկու տառ՝ «Շ» և «Կ», որոնց իմաստը ցայժմ անհասկանալի է, սակայն դրանց գրության ձևը հին է և վերստին ցույց է տալիս որմնանկարի VII դ. լինելը։ Վերջապես, շատ կարևոր են առաքյալների ձեռքերում պահվող գրքերի կազմերի նկարները, որոնք զարդարված են թանկագին քարերով։ Լինելով նկարազարդ կազմերի հնագույն նմուշ, դրանք վկայում են VII դ. հայ կազմարվեստի զարգացման բարձր մակարդակի մասին։

Արուճի 666 թ. որմնանկարը հայ գեղարվեստական մշակույթի պատմության ամենաարժեքավոր և յուրատիպ հուշարձաններից մեկն է։

РОСПИСЬ 666 ГОДА ХРАМА АРУЧ

КАРЕН МАТЕВОСЯН

Резюме

Храм Аруч и сохранившаяся в нем роспись датируются исследователями 60—80 гг. VII в. Данные эпиграфики и письменных источников, освещаемых по-новому, позволяют уточнить как дату постройки храма, так и время создания росписи. Храм Аруч был построен в промежутке между 661 и 666 годами по заказу армянского князя Григора Мамиконяна (661—685), а расписан был непосредственно по окончании строительных работ—в 666 г.

Роспись аручского храма имеет исключительно важное художественное и историко-культурное значение, являясь великолепным образцом искусства раннесредневековой Армении. Это первый памятник настенной живописи, сохранивший имя мастера-исполнителя—Степаноса. Как подпись мастера, так и надпись на свитке, который держит в руке Христос, являют собой интересные образцы древнего письма, а книги, изображенные в руках у апостолов, дают представление о переплетном искусстве того времени.